

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանի Ֆիզիկայի ֆակուլտետի
գիտական խորհրդի 06.04.21թ. կայացած թիվ 10.20-21 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 36 անդամներից 28-ը:

Հաստատվեց հետևյալ օրակարգը՝

1. Ընդհանուր ֆիզիկայի և աստղաֆիզիկայի և բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնների վարիչների ընտրություններ:

Նիստը վարեց ֆիզիկայի ֆակուլտետի դեկան, պրոֆ. Ռ. Հակոբյանը:

Լսեցին՝ ամբիոնների վարիչների պաշտոնի թեկնածուների քննարկման հարցը:

Ամբիոնների վարիչների թեկնածուներին ներկայացնելու և կարծիք հայտնելու համար **Էլույթ ունեցավ** մրցութային հանձնաժողովի նախագահ Ա. Կիրակոսյանը: Նա ներկայացրեց ամբիոնների վարիչների թեկնածուների տվյալները և արտահայտեց մրցութային հանձնաժողովի դրական կարծիքը երկու թեկնածուների վերաբերյալ: Այնուհետև իրենց ծրագրերը ներկայացնելու համար խոսք տրվեց ամբիոնի վարիչների թեկնածուներին:

Ելույթ ունեցավ ընդհանուր ֆիզիկայի և աստղաֆիզիկայի ամբիոնի վարիչի թեկնածու

Հ. Բադալյանը: Իր խոսքում նա նշեց, որ ամբիոնի համար առաջնային է համարում.

1. Ուսումնական ծրագրերի վերանայումն ու արդիականացումը:
2. Ուսումնական ծրագրերում այլ բնագիտական առարկաների (քիմիա, կենսաբանություն) ներառումը:
3. Բարոյապես և ֆիզիկապես մաշված լաբորատոր փորձերի համար նախատեսված սարքավորման թարմացումը:
4. Հեռավար ուսուցման համար նախատեսվող նյութերի, հատկապես լաբորատոր աշխատանքների հետ կապված, ընդարձակումը:
5. Գիտական սեմինարներում ուսանողների ընդգրկումը:
6. Այլ ֆակուլտետների և ամբիոնների հետ կապերի ընդարձակումը:

Ելույթ ունեցավ բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի վարիչի թեկնածու **Մ. Գրիգորյանը**: Նա իր խոսքում նշեց, որ նախատեսում է շարունակել ամբիոնում կատարվող աշխատանքները: Նշեց նաև, որ մեծ կարևորություն է տալիս ամբիոնում այս տարի բացվող նոր մասնագիտության հաջող մեկնարկին և նոր ուսումնական ծրագրի իրականացմանը, ինչը կնպաստի լավ ուսանողների քանակի ավելացմանը ֆակուլտետում: Գրիգորյանը նշեց, որ բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնում այս պահի դրությամբ կադրերի երիտասարդացման խնդիրը լուծված է: Նոր ուսումնական ծրագրում նախատեսված դասընթացները հիմնականում դասավանդելու են ամբիոնում պատրաստված երիտասարդ կադրերը:

Ելույթներից հետո նախագահ Ռ. Հակոբյանը առաջարկեց սկսել թեկնածուների քննարկումը:

Հ. Բադալյանին հարց տվեց Բյուրականի աստղադիտարանի տնօրեն **Ա. Միքայելյանը**: Հարցը վերաբերվում էր ամբիոնի և աստղադիտարանի հետագա համագործակցությանը: Բադալյանը պատասխանեց, որ առայսօր աստղագիտությունը համարվել է ամբիոնի ուղղություններից մեկը և ամբիոնը սերտ համագործակցել է աստղադիտարանի հետ, այսուհետ համագործակցությունը շարունակվելու է:

Ելույթ ունեցավ ընդհանուր ֆիզիկայի և աստղաֆիզիկայի ամբիոնի վարիչի ժ/պ **Մուրադյանը**: Նա ասաց, որ նախկինում բարձրացվել է աստղաֆիզիկայի ամբիոնի առանձնացման հարցը: Հարցը մնում է արդիական նաև այսօր:

Պ-ն Միքայելյանը նշեց, որ կարելի է դիտարկել համագործակցությունը միջճյուղային հարթակում, քանի որ ժամանակակից աստղաֆիզիկան խիստ առնչվում է ֆիզիկայի այլ ճյուղերի հետ:

Ելույթ ունեցավ Երևանի աստղադիտարանի տնօրեն **Ա. Մելքոնյանը**, նա նշեց որ աստղադիտարանի սարքավորումները նորոգվել են և գտնվում է աշխատանքային վիճակում, առաջարկեց համագործակցություն:

Բյուրականի աստղադիտարանի տնօրեն Ա. Միքայելյանը հարց ուղղեց **Մ. Գրիգորյանին**. Ինչպիսին է բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի դերը ֆիզիկայի ֆակուլտետում: Գրիգորյանը նշեց, որ ֆիզիկական խնդիրների մաթեմատիկական

լուծումների նոր հնարավորություններ են ստեղծվել այսօր, ինչպիսիք են, օրինակ, արհեստական բանականությունը, և այդ նոր մեթոդների ուսումնառությանն է նվիրված ուսումնական նոր ծրագիրը, որը իրականացվելու է ամբիոնում:

Նախագահը առաջարկեց ավարտել քննարկումները: Առաջարկը ընդունվեց:

Նախագահ Ռ. Հակոբյանը գիտխորհրդի անդամներին ներկայացրեց քվեարկության կարգը: Փակ, գաղտնի քվեարկություն անցկացնելու նպատակով գիտխորհրդի որոշմամբ կազմվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝

1. Ռոման Ալավերդյան (նախագահ)
2. Հրաչյա Ասատրյան
3. Ալեքսանդր Հայրապետյան

Հաշվիչ հանձնաժողովը գիտխորհրդի անդամներին բաժանեց մեկական քվեաթերթիկ: Քվեարկության ավարտից հետո հաշվիչ հանձնաժողովն ամփոփեց արդյունքները և կազմեց համապատասխան արձանագրությունները: Որից հետո հայտարարվեցին ընտրությունների արդյունքները:

Քվեատուփում առկա էին 28, անվավեր քվեաթերթիկ չկար: Փակ, գաղտնի քվեարկության արդյունքում բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի վարիչ է ընտրվել Մարտին Գրիգորյանը՝ 27 կողմ և 1 դեմ ձայներով: Ընդհանուր ֆիզիկայի և աստղաֆիզիկայի ամբիոնի վարիչ է ընտրվել Համլետ Բադալյանը՝ 16 կողմ և 12 դեմ ձայներով:

Որոշեցին՝ բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի վարիչ է ընտրել Մ. Գրիգորյանը: Ընդհանուր ֆիզիկայի և աստղաֆիզիկայի ամբիոնի վարիչ է ընտրվել Հ. Բադալյանը: Ընտրությունների արդյունքներն ընդունվեցին միաձայն:

Ֆիզիկայի ֆակուլտետի դեկան՝

Ռ.Ս. Հակոբյան

Խորհրդի քարտուղար՝

Գ. Հ. Հովհաննիսյան